ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/106

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ դատական դեպարտամենտ
Մասնակից՝ «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցում, համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5337-2020 գրությամբ «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 06.04.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-2736 գրության հիման վրա, 09.04.2020թ.-ին «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 09.04.2020թ.-ին:

10.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/106 համարի ծածկագիրը և հրապարակվել www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.05.2020թ.-ին:

2. ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ դատական դեպարտամենտը, 06.04.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-2736 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ ներկայացվում է Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:»:

3. «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 13.04.2019թ.-ին գրությամբ դիմել է «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից

09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5337-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ձեր վարույթում է գտնվում ՀՀ Դատական դեպարտամենտի (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ԼՕ-2020/106 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 06.04.2020թ.-ի թիվ ԴԴ-3-Ե-2736 գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Պատվիրատուն 26/03/2020թ.-ին www.armeps.am էլեկտրոնային համակարգի (այսուհետև նաև՝ էլեկտրոնային համակարգ) միջոցով հրապարակել է թիվ ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Մրցույթ): Մրցույթի 3-րդ չափաբաժնով նախատեսվում է ձեռքբերել «Համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ» (այսուհետև նաև՝ Գնման առարկա):

Ուսումնասիրելով Մրցույթի հայտարարությունը և հրավերը՝ Մասնակիցը 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է Մրցույթին մասնակցելու հայտ (այսուհետև նաև՝ Հայտ), որն իր մեջ ներառում է ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն Մրցույթի հրավերի հավելված N 1-ի և գնային առաջարկ՝ համաձայն Մրցույթի հրավերի հավելված N 2-ի:

Հայտը ստորագրել է Մասնակցի տնօրեն Թումասյան Վարդիթերը, և ձեռագիր, և էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ նույնականացման քարտի միջոցով, հայտը նաև կնքվել է Մասնակցի կնիքով:

Թումասյան Վարդիթերի նույնականացման քարտը վավեր է 16.04.2013թ.-ից մինչև 16.04.2023 թ.-ը, էլեկտրոնային թվային ստորագրության տարեկան սպասարկման վճարը վճարվել է 13/06/2019թ-ին, իսկ էլեկտրոնային թվային ստորագրությունը ակտիվ է մինչև՝ 30.06.2020 թ.-ը

Թիվ 2 արձանագրության 5.2 կետով Մրցույթի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրությունները վավեր չեն և չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել համապատասխան մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխա-նությունները:

Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

«էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի ա) պարբերության համաձայն՝ նույնականացման քարտում զետեղվում են հավաստագրման կենտրոնի կողմից թողարկված էլեկտրոնային թվային ստորագրության անհատական հավաստագրերը:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ նույնականացման քարտում զետեղված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը տրվում է նույնականացման քարտի վավերականության ժամկետով:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ հավատարմագրված հավաստագրման կենտրոնները, բացի սույն օրենքի 12-րդ հոդվածում սահմանված պարտավորություններից և իրավունքներից, իրավունք ունեն իրենց նախաձեռնությամբ ժամանակավորապես կասեցնելու էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի գործողությունը՝ ստորագրող անձի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում:

էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի գործողությունը կասեցվում է մինչև ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված վճարի կատարումը:

Վերը նշված նորմերի համաձայն՝ անձին տրվող նույնականացման քարտում զետեղվում է նաև անձին տրվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը: Հավաստագիրը գործում է նույնականացման քարտի վավերականության ժամանակահատվածում, որը էլեկտրոնային թվային ստորագրության տարեկան սպասարկման վճարը չվճարելու դեպքում կարող է կասեցվել: Նշվածից հետևում է, որ վավեր էլեկտրոնային թվային ստորագրություն ունենալու համար անհրաժեշտ է, որպեսզի անձի նույնականացման քարտը գտնվի վավերականության ժամանակահատվածում, իսկ էլեկտրոնային թվային ստորագրության սպասարկման համար սահմանված վճարը լինի վճարված:

Այսպիսով, սույն գործի փաստերից և վերը նշվածից կարող ենք փաստել, որ Վարդիթեր Թումասյանի էլեկտրոնային թվային ստորագրությունը վավեր է, քանի որ վերջինիս նույնականացման քարտը գտնվում է վավերականության ժամկետում, իսկ էլեկտրոնային թվային ստորագրության տարեկան սպասարկման վճարը վճարվել է 13.06.2019: Բացի այդ, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կայքում գտնվող Վարդիթեր Թումասյանի անձնական էջից երևում է, որ վերջինիս էլեկտրոնային թվային ստորագրությունը ակտիվ է մինչև՝ 30.06.2020թ.-ը: Նշյալից հետևում է, որ Վարդիթեր Թումասյանը Հայտում ներառված փաստաթղթերը նույնականացման քարտով էլեկտրոնային թվային ստորագրել է վավեր ստորագրության պայմաններում, ուստի կարող ենք նաև փաստել, որ Մասնակիցը պահպանել է Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով և Մրցույթի հրավերի 8.18 կետով սահմանված պահանջները և մրցույթի շրջանաներում ստանձնած որևէ պարտավորություն խախտելու միտում չի ունեցել: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի «Սահմանադրական դատարանի ակտերը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Նույն օրենքի «Որոշման կամ եզրակացության շարադրանքը» վերտառությամբ 64-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումը կամ եզրակացությունը, կախված գործի բնույթից, պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

դատարանի ընդունած որոշումը կամ եզրակացությունը հիմնավորող իրավական դիրքորոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանը 2007 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԴՈ-722 որոշմամբ արտահայտել է հետևյալ դիքորոշումը. ««էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը հստակ սահմանում է. որ «էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, (...)»:

«(...): Բոլոր այն դեպքերում. երբ օրենքով ներկայացվող փաստաթղթի (դիմումի) ստորագրված լինելու պայման է առաջադրված և պարտադիր չէ նոտարական կարգով անձի ստորագրության վավերականության հաստատում, ապա որևէ տարբերակում չպետք է դրվի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված կամ օրենքով սահմանված կարգին համապատասխանող էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթղթերի միջև:»»:

ՀՀ Սահմանադրական դատարանի վերոնշյալ դիրքորոշումից կարող ենք գալ այն եզրահանգման, որ եթե օրենքով պահանջվում է ստորագրել որևէ փաստաթուղթ և պարտադիր չէ նոտարական կարգով ստորագրության վավերականության հաստատում, ապա այդ փաստաթուղթը կարող է ստորագրվել, և ձեռագիր, և էլեկտրոնային թվային եղանակով, ընդորում՝ երկու դեպքում էլ այդ փաստաթուղթը ունենալու է նույն իրավաբանական ուժը, հետևաբար անկախ ստորագրության ձևից այն ենթակա է ՀՀ տարածքում բոլորի կողմից ընդունման, որպես պատշաճ ստորագրված՝ ստորագրող անձի կողմից հաստատված փաստաթուղթ:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից, Մասնակցի տնօրենը Վարդիթեր Թումասյանը Հայտում ներառված փաստաթղթերը ստորագրել է նաև ձեռագիր և հաստատել է Մասնակցի կնիքով: Նշված փաստը դիտելով՝ ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշման լույսի ներքո, կարող ենք եզրահանգել, որ Մասնակիցը ձեռագիր ստորագրելով Հայտը արդեն իսկ, ըստ էության, կատարել է Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով և Մրցույթի հրավերի 8.18 կետով սահմանված պահանջները:

Ամփոփելով վերոգրյալը՝ ևս մեկ անգամ հարկ ենք համարում հայտնել, որ Մասնակիցը Մրցույթի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն խախտելու միտում չի ունեցել:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Մասնակիցը Պատվիրատուի պահանջով Հայտը նորից էլեկտրոնային թվային չի ստորագրել և չի ներկայացրել վերջինիս, ապա այդ մասին հայտնում ենք, որ դա տեղի է ունեցել այն ժամանակ, երբ արտակարգ դրության պայմաններում մարդկանց տեղաշարժը խիստ սահմանափակված էր, և այդ հանգամանքով պայմանավորված Մասնակցի աշխատակիցները իրենց աշխատանքները կատարում էին հեռահար եղանակով, որի պատճառով տեխնիկապես հնարավոր չի եղել ժամանակին՝ մեկ օրվա ընթացքում արձագանքել Պատվիրատուի պահանջին՝ նորից ստորագրել և այդ ստորագրված Հայտը ներկայացնել Պատվիրատուին:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի և 50-րդ հոդվածի պահանջներով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք՝ ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/106 ծածկագրով ընթացակարգը:»:

4. <u>ՍՑ-ԼՕ-2020/106 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 26.03.2020թ.-ին հայտարարվել է «ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն թիվ 1 հավելվածի և գնային առաջարկ՝ համաձայն թիվ 2

հավելվածի, որոնք էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել են ընկերության տնօրեն Վարդիթեր Թումասյանի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 03.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրությունները վավեր չեն եղել և չեն համապատասխանել հրավերի սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ին առաջարկել սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի 06.04.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում չի շտկվել անհամապատասխանությունը, ուստի Հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել է անբավարար և մերժել է:

Մասնակցի կողմից ներկայացված՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքում առկա Վարդիթեր Թումասյանի անձնական էջի համաձայն՝ վերջինիս նույնականացման քարտը վավեր է 16.04.2013թ.-ից մինչև 16.04.2023թ.-ը, էլեկտրոնային թվային ստորագրության տարեկան սպասարկման վճարը վճարվել է 13.06.2019թ.-ին, իսկ էլեկտրոնային թվային ստորագրությունը ակտիվ է մինչև՝ 30.06.2020թ.-ը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5337-2020 գրությամբ «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս

լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի

պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող

մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընդ որում Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ կառավարության 01.03.2018թ. N 285-Ն որոշմամբ հաստատված «նույնականացման քարտում զետեղվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի թողարկումից բացի այլ տեսակի նյութական կրիչներում զետեղված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի թողարկման և տրամադրման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր ձեռք բերելու համար հայտատուն դիմում է Հայաստանի Հանրապետության հավաստագրման կենտրոն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ հավաստագրման կենտրոն կամ «ԷԿԵՆԳ»), որն իր կողմից հայտատուին ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, հավաստագրի տրամադրման նախապայմանները, ձևը, ժամկետները և վայրը:

Նույն կարգի արդեն 3-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի տրամադրման նախապայման է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կացության քարտի, Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրված նույնականացման քարտի,

հանրային ծառայության համարանիշի կամ վերջինս չստանալու վերաբերյալ տեղեկանքի, ինչպես նաև թվային ստորագրության տարեկան սպասարկման վճարի կատարման մասին անդորրագրի ներկայացումը:

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ կանոնադրության 7-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության խնդիրներն են մինչև կենտրոնացված հավաստագրման կենտրոնի ստեղծումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, իրավաբանական անձանց և պետական մարմիններին էլեկտրոնային ստորագրության հավաստագրման ծառայությունների տրամադրումը:

Վերոնշյալ նորմերի դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ էլեկտրոնային թվային ստորագրության օգտագործումը թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով: Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր ձեռք բերելու համար հայտատուն դիմում է Հայաստանի Հանրապետության հավաստագրման կենտրոն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ, որն իր կողմից հայտատուին ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, հավաստագրի տրամադրման նախապայմանները, ձևը, ժամկետները և վայրը:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 26.03.2020թ.-ին հայտարարված «ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ն՝ ներկայացրել է ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն թիվ 1 հավելվածի և գնային առաջարկ՝ համաձայն թիվ 2 հավելվածի, որոնք էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են եղել ընկերության տնօրեն Վարդիթեր Թումասյանի կողմից:

Հանձնաժողովի 03.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրությունները վավեր չեն եղել և չեն համապատասխանել հրավերի սահմանված պահանջներին, ինչով պայմանավորված Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ

կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ին առաջարկել սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի 17.02.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետում չի շտկվել անհամապատասխանությունը, ուստի Հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել է անբավարար և մերժել է:

Մասնակցի կողմից ներկայացված՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքում առակ Վարդիթեր Թումասյանի անձնական էջի համաձայն՝ վերջինիս նույնականացման քարտը վավեր է 16.04.2013թ.-ից մինչև 16.04.2023թ.-ը, էլեկտրոնային թվային ստորագրության տարեկան սպասարկման վճարը վճարվել է 13.06.2019թ.-ին, իսկ էլեկտրոնային թվային ստորագրությունը ակտիվ է մինչև՝ 30.06.2020թ.-ը:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ԳՀԱՊՁԲ-2019/16-16-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի թիվ 1 և թիվ 2 հավելվածները «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ի, որպես ՀՀ ռեզիդենտ կազմակերպության, տնօրենի կողմից ստորագրվել է վավեր հավաստագրով, ուստի դրանք չեն կարող համարվել անպատշաճ ստորագրված էլեկտրոնային փաստաթղթեր:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5337-2020գրությամբ «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/106 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ